ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 5-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքում սահմանել երկու տեղամասային կենտրոններ՝

1) առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ շենքը՝ հասցեն Մասիսի փողոց N4.

2) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ տնօրեն Զարուհի Ստեփանյանին /հեռ. 093-09-67-78/.

3) երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ շենքը՝ հասցեն Երիտասարդության փողոց N39.

4) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանին /հեռ. 095-09-05-65/.

2. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքները տիրապետողներին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար քարոզչական պաստառները փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Երևանյան խճուղու N15, N57, N63 և N65 բազմաբնակարան շենքերի պատերին՝ տրամադրված 3-4 քառակուսի մետր մակերեսների վրա:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2021 թվականի N57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17.06.2016թ. թիվ 22-Ն որոշումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար նախընտրական ժողովների և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրել դահլիճ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքում այլ դահլիճ չլինելու պատճառով տրամադրվում է <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ դահլիճը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի մայիսի 17

համայնք Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2021 թվականի մայիսի 17-ի
N 57-Ա որոշման

2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար համայնքում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճի վերաբերյալ

Հ/հ	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը /հասցեն/	Նստա-տեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը տնօրինող	Այլ նշումներ
1.	<<Մերձավանի մշակույթի տուն >> ՀՈԱԿ	Երիտասարդության փողոց թիվ 39	300	Յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 15:00-ից մինչև 19:00, իսկ ոչ աշխատանքային օրերին՝ ժամը 11:00-ից մինչև 19:00:	Ալվարդ Խուրշուդյան	2021 թվականի հունիսի 18-ին դահլիճը տրամադրել մինչև ժամը 19:00